

քայց և այնպէս ճարտարապետական քննութիւնք և քրիստոնէական հնախօսութիւնք, ինչպէս նաև վաղեմի ուխտաւորաց ուղեգրութիւնները շատ ստոյգ կերպով կը հաստատեն թէ մատնանշուած սրբավայրը կամ ուխտատեղին եղած է Մարիամանց տունը և հոն ի հնուսին շինուած է եկեղեցի մը, յանուն Ս. Իւղարեւ կանանց :

2.— Մենք մեր ձեռքին տակ ունինք գերմանացի պաղեստինագէտ երկրաչափ ճարտարապետ Herr Baurath von Schick Ի անգղիերէն թարգմանուած Տեղեկագիրը՝ որով, ի մէջ այլոց, կը նկարագրուի Իւղարերից սրբավայրը, տան մը վերածուելով կրած փոփոխութիւնը, ուխտաւոր ուղեգիրներու կողմէն անոր նկատմամբ աւանդուած տեղեկութիւնները և այլ պատմական պարագաներ : Նոյն շահեկան Տեղեկագիրը բաւական տարիներ յառաջ հրատարակուած է Palestine Exploration Fund պարբերականին մէջ, որմէ քաղելով կարևոր մասերը կը գնենք հոս. «Տար Տխը կամ Տխը ընտանիքին բնակարանը կը գտնուի Դաւթի Աշտարակի հարաւորեկէքը : Երբեմն եկեղեցի էր ան. ո՛չ միայն ժողովուրդին աւանդութեամբը, այլ նաև շէնքին քննութեամբ ալ կը հաստատուի այդ պարագան : Նոյն շէնքին պատերը թանձր են և կամար մը կրնան կրել, զիրքը գեղեցիկ է և վայելուչ : Ան ճշգորէն կը նմանի Մուրխարանի(*) Ս. Աստուածածնի եկեղեցիին : Այս եկեղեցիին արեւելեան մասը, որ աւերակ դարձած է, տան մը վերածուած է, ուղիղ պատերով և կարևոր պատուհաններով եւ երկյարկանի, այնպէս որ կարելի եղած է շէնքին տակը և վրան բնակութիւն հաստատել : Արեւելեան պատին մօտ կը տեսնուին փոքր սենեակներ՝ կողակին մօտ : Արևմտեան պատուհանները միայն նախնական են : Այս յիշուածներէն զատ՝ շէնքը ուրիշ փոփոխութիւններ և նորոգութեան նշաններ չի կրեր : Քարերը սովորական մեծութեամբ շինուած են : Եէնքը իր հին երևոյթէն զատ կարկառուն բան մը չունի. քարերը վայելուչ կերպով չեն տաշուած այլ ընդհակառակն քիչ մ'ալ կոշտ են : Կրնայ ըլլալ որ նոյն շէնքը ժամանակին սինակոկ մը եղած ըլլայ(?), եթէ այդպէս է, քրիստոնէական նախնի ժամանակներուն անոր վրայ աւելցուած է կողակ մը և դարձեալ կործանուած է ան, իսլամական տիրա-

(*) Երուսաղէմի Ս. Յովհաննու Ասպետներու շէնքերը :